№ 19 Փետրվարի 4 Հաբաթ 1884 Փետրվարի 4 Հաբաթ № 19

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ **1884** ԹՒԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ»*.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական ընտրութեան առիթով։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երևանից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կրակ և բոց։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Յունվարի 29-ին կատարվեցան Թիֆլիսի Հայոց եկեղեցիներում այն պատգամաւորների ընտրութիւնները, որոնք մի երկու ամսից յետոյ դումարվելով պէտք է ընտրեն Թիֆլիսի կամ, ինչպէս պաշտօնապէս անուանվում է „Վրաստանի և Իմէրեթի“ Հայոց թեմի կողմից մի աշխարհական պատգամաւոր, որ պէտք է գնայ Էջմիածին կաթողիկոսական ընտրութիւններին ձայն տալու։

Ընտրութիւնները վերջացան, այսինքն սկզբնական ընտրութիւնները։ Թիֆլիսի իւրաքանչիւր Հայոց եկեղեցուց ընտրվեցան չորս չորս պատգամաւորներ։

Եւ ահա սկսում են աղաղակել թէ ընտրութիւնները անկանոն էին, ընտրութիւնները անվաւեր էին և այլն։ „Մեղու Հայաստանի“ լրագիրը աղաղակում է թէ ընտրութիւնները անկանոն էին, „Նոր-Դարը“ աղաղակում է թէ ընտրութիւնները անկանոն էին։ Բայց ինչի՞ անկանոն,—նրանցից ոչ ոք պարզ չէ բացատրում։

Մեզանում, ինչպէս յայտնի է, մեր եկեղեցու ծուխ լինելու և ժամաւոր լինելու մէջ զանազանութիւնը շատ ճիշտ կերպով որոշված չէ։ Իսկ մեր ընտրութիւնները հիմնված են նոյն իսկ այդ ընտրողական ոյժերի վրա։ Մեր քահանաները, որ շատ ազատ ժամանակ ունեն, կարող էին մի ճիշդ ցուցակ շինել իրանց ծուխին պատկանած անձինքների և մի ուրիշ ցուցակ իրանց եկեղեցու ժամաւորների։ Բայց ծուխը ինքն ըստ ինքեան մի անորոշ գաղափար է։ Ծուխը չեն կազմում անպատճառ այն մարդիկ, որոնք բնակվում են նոյն թաղի մէջ, որտեղ գտնվում է եկեղեցին։ Օրինակի համար, ես կարող եմ վանքի մայր եկեղեցու ծուխ լինել, բայց մի և նոյն ժամանակ ես Քամոյեանց եկեղեցու ժամաւոր եմ։ Ուրեմն ո՞ր եկեղեցի գնամ ընտրութիւնների ժամանակ։ Մէկի մէջ գնամ—ինձ կասեն՝ դուք այստեղի ժամաւոր չէք։ Միւսի մէջ գնամ—ինձ կասեն՝ դուք այստեղի ծուխ չէք։ Ոչ մի տեղ չը գնամ—կասեն՝ ի՞նչ անտարբերութիւն դէպի ընտրողական գործը։

Ուրեմն ո՞ր ջուրն ընկնեմ։

Բայց զարմանալի է մի բան։ Կան մարդիկ, որոնք հէնց որ տեսնում են թէ իրանք չեն ընտրվել, կամ չեն ընտրվել նրանց ցանկացած մարդիկ,—անմիջապէս սկսում են աղաղակել թէ ընտրութիւնները անկանոն էին։ Նախ հաւաքվում են եկեղեցում։ քահանան կամ երեցփոխը փոխանակ պահանջելու, որ ամեն մէկ ընտրող մտնելով եկեղեցի նախ ստորագրէր մի մեծ թերթի վրա իր անունն ու ազգանունը, որպէս զի երևայ թէ արդեօք այդ մարդը ճշմարիտ այդ եկեղեցու ծուխ է, ժամաւոր է, թէ ոչ, և եթէ ոչ ծուխ է, ոչ ժամաւոր է,—կարելի է նրան խնդրել չը մասնակցել ընտրութեանը։ Բայց ոչ։ Համբերում են, յոյս ունելով, որ իրանց կուսակցութեան մարդիկ ընտրվեն, իսկ երբ խաբվում են իրանց յոյսերի մէջ, այն ժամանակ սկսում են աղաղակել թէ ընտրութիւնները անկանոն էին։

„Մեղու“ լրագիրը չէ հասկանում, որ սկզբնական, ծխական ընտրութեան ժամանակ պէտք է ընտրել այն տեսակ անձինք, որոնք նոյն կուսակցութեանը պատկանող և պատգամաւոր կընտրեն, որ իր կողմից նոյն կուսակցութեանը պատկանող և կաթողիկոսացու կընտրի։

Պարզ խօսենք, որպէս զի „Մեղու“ լրագիրը հասկանայ։

Դիցուք թէ Գրիգոր Արծրունի, որ Քամոյեանց եկեղեցու ժամաւորներից մինն է, ցանկանում է, որ Մակար եպիսկոպոս ընտրվի կաթողիկոս։

Պարզ է, որ յունվարի 29-ի ընտրութիւնների ժամանակ նա ձայն կը տար Գէորգ Աքիմեանցի, Ապանդար Սպանդարեանցի, Պէտրոս Սիմէօնեանցի համար, որպէս զի սրանք մարտ ամսին գումարվելով մի թեմական պատգամաւոր ընտրելու համար, Մակարի կուսակցութեանը պատկանող մի անձն, օրինակ Գէորգ Եւանդուլեանց, աւելի շանսեր ունենար ընտրված լինելու։ Բայց որովհետև նոյն Գրիգոր Արծրունին կուզենար կաթողիկոսական աթոռի վրա Ներսէսին տեսնել, նա յունվարի 29-ին ձայն տրուեց այնպիսի անհատների համար, որոնց մասին յոյս ունի, թէ թեմական պատգամաւորի ընտրութեան ժամանակ այնպիսի մարդ կընտրեն, որ իր կողմից անպատճառ Ներսէսի համար ձայն կը տայ։

Այժմ հասկացա՞ „Մեղուն“ թէ ոչ։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐԱԿ ԵՒ ԲՈՑ

III

Բայց Մարսէլինան լուռ լսում էր իր ամուսնու խօսքերը։ Նա վերջին ժամանակներում շատ փոխվեց և սկսեց սառն ու պաղ կերպով վարվել Փիլիպպոսի հետ, կարծես վախենալով ազատութիւն տալ իր զգացմունքին։ Զարմանալի բան։ Ինձ շատ անգամ պատահել է նկատել, որ սիրահարվածները, որոնք դէպի իրանց սիրոյ առարկան ունեցած քնքոյշ զգացմունքի դէմ աշխատում են պատերազմել,—բոլորովին հակառակ եղբակացութիւնների են հանում, և եթէ ինձ վիճակված լինէր վճռել այն հարցը, թէ ո՞րն է կանոնաւոր՝ կռուել թէ զիջանել, ես ինձ չափազանց դժուար դրութեան մէջ կը զգայի։

Այնուամենայնիւ, պէտք է յիշել, որ կռուի մէջ մտնող մարդը միշտ մտածում է իր հակառակորդի մասին, կենտրօնացնելով այդպիսով իր բոլոր մտածմունքները մէկ առարկայի վրա։ Հիպնօտիզմի փորձերը ակնյայտնի ցոյց են տալիս, թէ որպէս վտանգաւոր է այդ։ Զօրեղ և առողջ մարդը, ուղղելով իր հայացքը փայլուն կէտի վրա, կորցնում է ոյժերը և քնում է չնորհիւ այն բանի, որ յամառութեամբ մտածում է քունը յաղթելու հնարաւորութեան մասին։

Սակայն ժամանակ է թողնել այդ բոլոր դատողութիւնները և խօսել իմ հերոսների մասին։

Միանգամ, օգուտ քաղելով պարզ և տաք երեկոյից, Մարսէլինան և Փիլիպպոսը երկուսով ըզբօսնում էին ծովի ափին։ Վալէնտինը հէնց նոր գնաց տուն իր առանձնասենեակում պատուհանները փակելու անհրաժեշտութեան պատրուակով (որ նա մոռացաւ իր ժամանակին անել) և ասելով, որ իր ինֆուլզօրիան կարող է մրսել, մինչև անգամ ցրտահարվել...

—Ամենևին հարկաւոր չէ, որ դուք տուն վերադառնաք, շտապով ասում էր Վալէնտինը, դիմելով իր բարեկամին և Մարսէլինային, ինձ խիստ անախորժ կը լինէր, եթէ իմ անզգուշութեան պատճառով...

—Ես ևս տուն կը գնամ... յայտնեց Մարսէլինան, բայց Վալէնտինը շարունակում էր համոզել իր կնոջը.

—Այդ ինչ քմահաճութիւն է, իմ բարեկամ։ Եղանակը այնպէս տաք է, որ մինչև անգամ ամօթ է սենեակներում նստել, և եթէ այս հանգամանքը չը լինէր, ես նոյնպէս չէի գնայ։

Երեկոն իրաւ որ հրաշալի էր. պայծառ փայլող բիւրաւոր աստղիկները սփռվել էին երկնքի մութը կամարի վրա, ափին մօտեցող ալիքների խաղաղ ծփանքը, և քաղաքային կեանքի հեռաւոր խուլ ձայնը միախառնվում էին. օդի մէջ կանգնած էր ծաղկող ծառերի անուշհոտութիւնը, լսելի էր հեռուում երգի թուլացող ձայնը...

Մարսէլինան մտածմանց մէջ ընկաւ, հոգւոց հանեց և... մնաց, իսկ Վալէնտինը, համարեա վազելով գնաց տուն։ Գիտնականի քունքերի վրա սառը քրտինք էր դուրս տալիս, երբ նա մտածում էր, որ առանց նրան տանը կարող էր որ և է դժբաղդութիւն պատահել ինֆուլզօրիային։

Փիլիպպոսը և Մարսէլինան աչքերով լուռ հետևում էին հեռացող Վալէնտինի կերպարանքին, և նրանցից իւրաքանչիւրը խորասուզված էր իր մտածմունքների մէջ։ Վերջապէս Փիլիպպոսին ձանձրացրեց այդ լռութիւնը և նա հարցրեց իր ուղեկցուհուն.

—Ինչի էիք կամենում դուք տուն վերադառնալ։

—Ես շատ յոգնած եմ...

—Միթէ դուք զբօսել էք այսօր առաւօտ։

—Ոչ։

Նոքա համարեա չչնջելով էին խօսում։ Այդ օտարոտի ձևը գոյութիւն ունի սիրահարների մօտ. նրանց թվում է, որ այդ ամենալաւ եղանակն է գաղտնիքը ծածկելու համար։

—Եթէ դուք յոգնել էք, ուրեմն թոյլ տուէք առաջարկել ձեզ իմ ձեռքը։

—Ոչ, ոչ, չնորհակալ եմ ձեզանից, այդ բոլորովին աւելորդ է։

—Բայց եթէ դուք կը յենվէք ինձ վրա, ձեզ համար աւելի հեշտ կը լինի։

—Խնդրում եմ, միք թախանձի... Ես սիրում եմ միայնակ մնալ։

Փիլիպպոսը թօթվեց ուսերը և լռեց։ Երկուսն ևս մի քանի բոպէ լռեցին։

—Ասեցէք, խօսեց Փիլիպպոսը սրտաշարժ քնքշութեամբ, նայելով ջահիլ կնոջ վրա. դուք չէք բարկանայ, եթէ բոլորովին անկեղծաբար կը խօսեմ ձեզ հետ։

—Զարմանալի հարց, ես կարծում եմ, որ անկեղծութիւնը ամեն խօսակցութեան անհրաժեշտ պայմանն է...։

—Շատ ճշմարիտ է... Բայց կան բաներ, որոնց մասին պէտք է դուշակութիւններ անել, որոնք բացատրութիւնների կարօտ չեն։

—Խնդրում եմ յոյս չը դնել իմ նրբամտութեան վրա։ Ես հասկանում եմ միայն այն, ինչ որ իմ պարտաւորութիւնս ինձ թելադրում է հասկանալ։ Ես ձեզ լսում եմ... աւելացրեց Մարսէլինան, դուրս կոչող հայացք գցելով իր ուղեկցի վրա։

—Ես կամենում էի ասել, որ վերջին ժամանակներս դուք շատ սառնասիրտ էք վարվում ինձ հետ, սկսեց Փիլիպպոսը,— դա ինձ խիստ վշտացնում է, մանաւանդ որ ես ոչինչ բանում ինձ մեղաւոր չեմ զգում։ Առաջ դուք ինձ հետ բարեկամաբար էիք վարվում...

—Ինչից գիտէք, որ ես բարեկամութիւն էի տածում դէպի ձեզ։ Ինչ փաստեր ունէք այդ բանը հաստատելու համար։

—Ոչինչ խոշոր փաստ և հաղարաւոր մանր բաներ, որոնց վրա ես կարող եմ մատնացոյց անել։

—Ուրեմն, տեսնում էք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Փետրվարի 1-ին

Որպէս դի՛ ուրիշները չը կարծեն թէ Երևանում բարեգործութիւններ չեն լինում, ես այս անգամ իմ թղթակցութիւնը պիտի լցնեմ մի շարք բարեգործութիւններով, որոնց նման բարեգործութիւններ եթէ ուրիշ տեղերում պատահում են, նրանք կարօտ թղթակիցները մի քանի անգամ դրելով աշխարհը զզրդացնում են: Բայց Երևանում կատարված բարեգործութեանց մասին ոմանք ծուլանում են գրելու, և ոմանք նախանձում են:

Ոչ միայն Երևանում, այլ շատ տեղերի հետ համեմատելով, պէտք է խոստովանել, որ առաջին և ամենաազնիւ բարեգործը օրիորդ Գայիանէ Յովհաննիսեանցն է, որ ահա երկու տարին լրանալու մօտ է, որ բոլորովին ձրի կատարում է հայ օրիորդական դպրոցների տեսչուհութեան պաշտօնը, որը մէկ ուրիշին վարձով յանձնելու համար առնուազը մի հազար ռուբլի փող է հարկաւոր: Գուցէ ոմանք ասեն թէ «ինչա՞ չունի, հարուստ է»: Բայց մեզանում հազարաւոր յայտնի հարուստներ կան, որոնք դեռ մի կոպէկ ազգային գանձանակը դցած չունեն: Ո՛րտեղ դուք կարող էք գտնել մի հայ օրիորդ, որ թողնի իր ընտանիքը և իր ազգականներին, գայ Երևան և՝ ոչ միայն ձրի տեսչուհութիւն անէ, այլ մի քանի դաս էլ ձրի ասանդէ, կատարելապէս նուիրված լինի դպրոցներին, որոնց մէջ որոնում է ուսումնասէր օրիորդը իր փառքն ու երջանկութիւնը: Դեռ չեմ ասում ամենի օրիորդի միւս բարեգործութիւնները, որ որը չը քաւսը աշակերտուհիներին և աշակերտներին շատ անգամ նուիրում է դասական պիտոյքներ, հագուստներ, և իր հաշիվ այդպիսիներին ուղարկում է ուսումնարան:

Առաքինի օրիորդը մեր հայ դպրոցներին իր սիրալիր ծառայութիւնը քիչ համարելով, իր սեփական միջոցներով մի ծաղկոց ևս հիմնարկել է Երևանում, որի յառաջադիմութեան մասին ոչինչ չէ խնայում: Թէպէտ և տարեկան, ինչպէս բուն աղբիւրից տեղեկացել եմ, մի հարիւր ռուբլի էլ վնաս է անում, բայց այնուամենայնիւ շարունակում է իր սկսածը, առանց մի կոպէկի ակնկալութիւն ունենալու: Բայց ցաւելով պէտք է ասել, որ երևանցիք չեն հասկանում ծաղկոցի նշանակութիւնը և շատ քչերն են իրանց երեխաներին ուղարկում ծաղկոց:—Յարգելի օրիորդի եռանդուն գործունէութիւնը տեսնելով, թող Ներսէս ինձ ասել, որ կանանց հասարակութեան մէջ (չեմ մեղանչի եթէ տղամարդկանց հետ էլ համեմատեմ) ուսումնարանական ասպարիզում հաղուագիւտ են այսպիսիները:

Երևանում երկու բարեգործական ընկերութիւն կայ, Թիֆլիսի ընկերութիւնների ճիւղեր, մէնը արական, մէնը իգական: Առաջինին յաջողութիւն մաղթելով, երկրորդին շնորհակալութիւն ենք անում որ 70 ր. նուիրել է, չը գիտեմ Սահականուշեան, թէ Գայիանեան դպրոցին:

Մի նշանաւոր և համակրութեան արժանի բարեգործութիւն էլ արեց պ. Իսահակ Սարգսեանցը, որ 400 ր. նուիրեց սուրբ Սարգիս եկեղեցուն: Գեղեցիկ բարեգործութիւն է. բայց աւելի գեղեցիկ կը լինէր, եթէ 200 եկեղեցուն տար, 200 հայ դպրոցներից մէկին, որովհետև եկեղեցին և դպրոցը հարազատ քոյր ու եղբայր են: Ցոյս ունենք որ մի ուրիշն էլ դուրս կը գայ, այդ պակասը կը լրացնի: Շնորհակալութիւն բարեպաշտ Սարգսեանցին:

Մի օրինակելի բարեգործութիւն էլ արեցին պ. պ. Լ. Տիգրանեանցը և Վ. Բաբաջանեանցը, որոնք իրանց գրադարանը նուիրեցին Գայիանեան դպրոցին: Առաջին պարոնը նուիրել է մինչև 130 կտոր գիրք, իսկ երկրորդը մօտ 250: Գայիանեան դպրոցը մինչև հիմայ չէ ունեցել գրադարան: Բայց այժմ այդ 380 կտոր գիրքը կազմում են մի փոքրիկ գրադարան, որ կարճ ժամանակից յետոյ կարող է մի հարուստ գրադարան դառնալ: Սրտաբուխս շնորհակալութիւն յիշեալ պարոններին, որոնք գրադարանի պատուաւոր հիմնադիրներ դարձան:

Յունվարի 8-ին մի խումբ, յօգուտ դպրոցի գրագարանին «Աշակ երկրորդը» ներկայացնելով կամենում էին մի բարեգործութիւն էլ իրանք անել: Բայց չը յաջողվեցաւ խեղճերին, որովհետև ներկայացումից յետոյ երբ հաշիւ էին տեսնում, նկատեցին որ ծախսը մուտքից դուրս չէ գալիս. այդ պատճառով մուտքը աւելի քիչ լինելով, ծախսից դուրս եկան և մի քանի ասլասի վնաս արեցին և քիթ ու պռօշները քաշ արած տընխուր ու տրտում տուն գնացին: Խեղճ երիտասարդներ, պատիւ մեր Երևանի հասարակութեան: Բայց խաղը բաւական լաւ էր:

Անցեալներում, յունվարի 10-ին մի պատուաւոր ընտանիքում հիւրասիրված էին մի քանի երիտասարդներ: Սեղանի նախագահը առաջին բաժակը առաջարկեց «Աշակի» խմբագրի կենացը, յետոյ պ. Բաֆֆիի կենացը, յետոյ բոլոր հայ խմբագիրների կենացը առանձին առանձին մի մի բաժակ, որին հետևում էր բուռն ծափահարութիւն: Ճաշը տևեց մինչև գիշերվայ ժամի 3-ը և այդքան ժամանակ տաք վիճաբանութեան նիւթ էին դարձել մեր լրագիրները:

Բ. Ե.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունվարի 29-ին

Յունվարի 27-ին երեկոյեան կայացաւ «Մարդասիրական ընկերութեան» ընդհանուր ժողովը, ուր ներկայ էին մօտ 50 անդամներ: Ժողովի նախագահ ընտրվեցաւ մի դէրբէնդցի պարոն, որ պատահմամբ այստեղ էր: Նախ կարդացվեց անցեալ տարուայ հաշիւը, որից երևաց, որ ընկերութիւնը այս տարի էլ դեֆիցիտ է ունեցել, միայն շատ քիչ, համեմատելով անցեալ տարուայ հետ: 1883 թուականին ընկերութեան արած բարեգործութիւնները հետևեալներն են. տեղիս երկսեռ դպրոցին նպաստ մօտաւորապէս 3340 ռուբլի, չորս գիւղական դպրոցների—510 ռուբլի, Էջմիածնայ ճեմարանին 300 ռուբլի, Բագուի բէալական դպրոցի չքաւոր աշակերտներին 100 ռուբլի, մի քահանայի 40 ռուբլի: Հաշիւներից յետոյ սկսեցին 1884 թուի համար նախահաշիւ կազմել: Վերջինիս մէջ նշանաւոր փոփոխութիւններ չեղան: Այն 60 ռուբլին, որով ընկերութիւնը նպաստում էր Մադրասի գիւղի դպրոցին, չը մտցրին նախահաշիւի մէջ ու շատ իրաւացի կերպով վարվեցին, որովհետև մադրասացիները հարուստ են և 60 ռուբլուն կարօտ չեն: Հաշիւը գնելուց ու նախահաշիւ կազմելուց յետոյ պիտի քննվէին մի քանի կողմնակի խնդիրներ, օրինակ մի համալսարանական ուսանողի խնդիրքը և այլն: Բայց որովհետև արդէն ժամի 11-ից անց էր, ուստի որոշեցին ցրուել ու կրկին ժողովվել ամսոյս 30-ին:

Կարճ կերպով ժողովի պատմութիւնը անելուց յետո, անցնենք այժմ այն հարցերին, որոնց մասին նոյնպէս խօսվեցաւ ժողովի մէջ:

1) Ամենանշանաւոր հարցը առաջարկեց ժողովի նախագահը, խօսելով հետևեալ փոքրիկ, բայց գեղեցիկ ճառը. «Պարոններ, Դէրբէնտը ունի 120 տուն հայ բնակիչ, որոնցից միայն 30 տունն է փոքր ի շատէ ապահովված: Բայց Դէրբէնտի հայ հասարակութիւնը կարողանում է պահել մի բարեկարգ երկսեռ դպրոց: Կը վայելէ, արդեօք, Բաքուի նման հարուստ ու բազմահայ քաղաքին, որ իր ոյժերով չը պահէ իր որդւոց դպրոցը և սրա համար Մարդասիրական ընկերութիւնից նպաստ ստանայ, այն էլ մի նշանաւոր գումար: Խնդրում եմ ամենքիդ լաւ ուշադրութիւն դարձնել ասածիս, որովհետև ընկերութիւնդ պիտի ծառայէ բոլոր Ռուսաստանի հայերին և ոչ թէ նրա մի մասին»:

Եւ իրաւ, ինչ է նշանակում 3340 ռուբլի (բացի տունից) նպաստ տալ այն դպրոցին, որի մէջ հաղիւ թէ 10 հատ իսկապէս աղքատ երեխայք կան, բայց անթիւ, լուսաւորութեան անունն անգամ չը լսած հայոց գիւղերից միայն չորսին օգնել, այն էլ ընդամենը 510 ռուբլիով: Ժողովուրդը միաձայն հաստատութիւն տուեց պ. նախագահի ասածին, որովհետև նրա խօսքը պարզ էր ու ճըշմարտութիւն յայտնող: Որոշվեց առաջարկել ուսումնարանի հոգաբարձութեանը, որ նա փոքր առ փոքր աւելացնէ աշակերտական թուակը ու դործը այնպէս տանէ, որ վերջապէս ուսումնարանը կարողանայ պահվել իր սեփական ոյժերով:

2) 1882 թուի հաշիւները քննելիս անցեալ տարուայ ընդհանուր ժողովում, խորհուրդի անդամները յանձն էին առել իրանց արած 1,700 ռուբլ դեֆիցիտը անպակասելի աղբիւրներից ձեռք բերել մինչև 1885 թուի յունվարի 1-ը: Հակառակ դէպքում պարտաւորվում էին իրանց դրպանից վճարել: Բայց որովհետև արդէն խորհուրդի անդամներից երկուսը հրաժարվել են պաշտօնից, իսկ 1700 ռուբլուց դեռ մի կոպէկ ձեռք չէ բերուած, ուստի այստեղ հարց է ծագում. գուցէ խորհուրդի հին անդամներից նրանք էլ, որ դեռ մնում են, այս տարի հրաժարվեն իրանց պաշտօնից, այն ժամանակ ումից կարող է ընկերութիւնը պահանջել վերոյիշեալ գումարը: Խորհուրդի դեռ չը հրաժարված անդամները յայտնեցին, որ իրանք էլ կը թողնեն իրանց պաշտօնը, թէ չեն թողնի, այդ մի և նոյն է, որովհետև յիշեալ պարտքը իրանցն է և եթէ չը կարողացան անպակասելի աղբիւրներից ձեռք բերել, կը վճարեն իրանց գրպանից:

3) Մի քանի անդամներ կանոնադրութեան մէջ աննշան անյարմարութիւններ կամ մթութիւններ նկատելով առաջարկում էին նորոգել կանոնադրութիւնը և առաջարկել կառավարութեանը: Բայց ընդհանուր ժողովը չընդունեց այդ առաջարկութիւնը, որովհետև անյարմար կէտերը շատ աննշան են:

4) Առաջարկվեցաւ ապահովացնել ընկերութեան չինութիւնը, որ և ընդհանուր համաձայնութեամբ ընդունվեցաւ: Այդ բանին նպաստեց մօտ ժամանակները տեղս այրված մի թուրքի փառաւոր չինութիւնը:

Ահա սորանք են ժողովում քննված աւելի հետաքրքիր խնդիրները:

Ս. Թառայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը: «Երևանի հայ հասարակութիւնը, մի քանի հարիւր մարդկանց ստորագրութեամբ, նոյնպէս քաղաքագլխի և առաջնակարգ մարդկանց ստորագրութեամբ, յունվարի 29-ին ներկայացրին Էջմիածնի սինոդին մի խնդիր որ այն աշակերտները, որոնք Նահապետեանի կարգադրութեամբ արձակված են ճեմարանից, կրկին ընդունվին, քանի որ այդ ողորմելիները քաղցած և մերկ թափառում են Երևանի և Էջմիածնի փողոցներում: Նրանցից ոմանք հեռացել են արդէն Էջմիածնից, որոնցից մէկը, ինչպէս պատմում են ճանապարհին ցրտից մեռել է: Սինոդը, ասում են, խոստացել է այս խնդիրը անմիջապէս կատարել: Աշակերտներից մի քանիսներին, որոնք հեռացել են արդէն, քաղաքիս մի քանի հարուստ անձինք ուզում են իրանց հաշիւով կրկին բերել»:

—

Մի մասնաւոր նամակից, որ ստացվեցաւ Տրապիզոնից, քաղում ենք հետևեալ մանրամասնները Մատթէոս եպիսկոպոս Նազարեանցի թաղման մասին, որ տեղի ունեցաւ 18 դեկտեմբերի: «Եպիսկոպոսի թաղման օրը բոլոր օտարազգի հիւպատոսները ի նշան համակրութեան դէպի հայ եպիսկոպոսը զարդարեցին իրանց բնակարանը իրանց դեռուութեան դրօշակով, թաղման հանդիսին և հայոց ե-

---

—Այո, և չը նայելով այդ բանին, ես այնուամենայնիւ կասեմ, որ դուք շատ փոխվել էք:

—Դուք սխալվում էք, ընդմիջից Մարսելինան,—և վերջապէս, եթէ ես իսկապէս փոխվել եմ, արժէ՞ արդեօք խօսել այդպիսի դատարկ բաների մասին: Ի՞նչ եմ ես ձեզ համար: Մի պատահական ծանօթ, որի գոյութեան մասին դուք իսկոյն կը մոռանաք, հէնց որ մենք կը բաժանվենք:

—Սակայն թոյլ տուէք ինձ հարցնել՝ միթէ ես պարտաւոր եմ ամբողջ կեանքը մոռանալ ձեր մասին:

—Ես այդ չեմ ասել:

—Ո՞րպէս խոստասիրա էք ինձ հետ այսօր, հոգւոց հանեց Փիլիպպոսը,—ինչ է պատճառը, ինչ մեղք գործեցի ես:

—Ես դուք դեռ հարցնում էք: Միթէ դուք չէք հասկանում, որ ստիպում էք ինձ տանջվել:

—Ե՞ս: Տէր իմ Աստուած, ինչ էք ասում:

—Այո՛, դուք:

—Ներեցէք ինձ, բայց դուք սխալվում էք... եթէ դուք կարողանայիք թափանցել իմ հոգուս մէջ, դուք ինքներդ կը տեսնէիք, որ բացի հաւատարմութեան և յարգանքի...

—Բայց ինչի համար ուրեմն, չտալով ընդմիջից նրան Մարսելինան,—դուք յուզում էք ինձ: Ես միշտ յօժարութեամբ և սիրով ընդունում էի ձեզ ինձ մօտ, իսկ դուք...ինձ հետ միայնակ մնալով, դուք դիտամբ սկսում էք այնպիսի խոսակցութիւն, որը ինձ հոգեկան տանջանքներ է պատճառում... Բայց դուք, այնուամենայնիւ, շարունակում էք... ձեզ պատրաստելի է տանջել ինձ... Դէ՛հ, լաւ, ես խոստովանում եմ ձեզ, ինձ ուրախութիւն էր պատճառում ձեզ հետ մնալը, ձեր ընկերութիւնը ինձ միջոց էր տալիս ախորժելի կերպով անցկացնել ժամանակը, բայց... Բայց ասացէք, ի սէր Աստուծոյ, միթէ այդ լաւ է, որ մենք ձեզ հետ միայնակ ենք այստեղ, այսպիսի դիշերը... այսպէս հեռու քաղաքից և ամեն բնակութիւնից... այդ... այդ կատարեալ խելագարութիւն է: Ես նա ինչպէս վստահացաւ թողնել ինձ միայնակ ձեզ հետ: Ո՛հ, ես ամաչում եմ նրա փոխարէն: Ո՞րպէս նա ինչպէս վստահացաւ թողնել ինձ միայնակ ձեզ հետ: Ո՛հ, ես ամաչում եմ նրա փոխարէն: Ո՞րպէս ես տանջվում եմ... ես պատրաստ եմ լալ: Խնդրում եմ ձեզ, ազաչում եմ, մի խօսէք ինձ հետ այն բանի մասին, ինչ բան որ չեմ կամենում ձեզանից լսել, ես չը պէտք է լսեմ... ես...ես առանց խօսքերի ևս հասկանում եմ ձեզ: Դուք շատ նրբամիտ էք, Փիլիպպոս... Դուք նոյնպէս բոլորը հասկանում էք... դուք ընդունակութիւն ունէք դուշակել իմ ցանկութիւնները, մինչև անգամ իմ կասկիզները: Ո՛հ, որպէս վատ բան է, որ ես դուշակում եմ ձեզ... բայց ինչ արած: Ես այնպէս միայնակ եմ... ես ոչ ոք չունեմ, որի հետ կարողանայի խօսել, սիրտս հանդստացնել, այն ինչ, ես երբեմն կատարելապէս խեղդվում եմ մչտական փակված դրութիւնից... Վաղ թէ ուշ, բայց մենք պէտք է բացատրութիւններ տայինք միմեանց, և այժմ երբ ամեն բան պարզվեցաւ, մենք կաշխատենք այլ ևս երբէք չը վերադառնալ այդ առարկային:

—Ցուցէք ինձ ձեր ձեռքը... յենվեցէք ինձ վրա, ցածր ձայնով խօսեց Փիլիպպոսը:

—Ինչի:

—Գոնէ նրա համար, որ ախորժելի կերպով աւարտենք մեր դրօսանքը: Ցաւում եմ, որ դուք չէք կամենայ, որ այս զրօսանքը տխուր յիշողութիւն մնայ մեր ամբողջ կեանքում:

Մարսելինան կատարեց Փիլիպպոսի խնդիրքը, բայց հէնց որ նրանց ձեռքերը դիպան միմեանց, նրանք երկուսն ևս ցնցվեցին ամբողջ մարմնով: Խօսքերը սառչում էին նրանց շրթունքների վրա, իսկ սրտերը զարկում էին և յանդգնութեամբ չը շնչում էին սիրոյ հին, բայց մչտական քաղցր խօսքերը: Նոքա լուռ գնում էին, անդգալի կերպով դանդաղեցնելով քայլերը և աչխատելով չը նայել միմեանց:

Վերջապէս Մարսելինան խօսեց:

—Խոստացէք ինձ, ասեց նա,—որ դուք այլ ևս երբէք չէք սկսի դրա նման խօսակցութիւն... եթէ ոչ մենք ստիպված կը լինենք բաժանվել ձեզանից:

Ընթերցողն խնդրում եմ ուշադրութիւն դարձնել. Մարսելինան պայմաններ էր դնում, համաձայնութիւն էր կայացնում, մի խօսքով, փոփոխում էր տակտիկան:

—Ո՛հ, ինչի ես աւելի վաղ չը հանդիպեցի քեզ... Ո՛րքան բախտաւոր կը լինէինք մենք:

—Դադարեցէք, մի խօսէք դրա մասին, Փիլիպպոս: Ինչ հարկաւոր է տանջվել ցաւակցութիւններով, եթէ հնար չը կայ ճակատագրի սխալն ուղղել:

Նոքա դանդաղ քայլերով վերադառնում էին տուն, պատասխանելով միմեանց հարցերին կարճ նախադասութիւններով: Մարսելինան համաձայնվեց լսել Փիլիպպոսի խելացնոր խոստովանութիւնը միայն այն պատճառով, որ նա խօսք էր տալիս այլ ևս երբէք չը վերադառնալ այդ առարկային: Մարսելինան ասում էր, որ ցանկանում է պահպանել անձնայարգանքը, նա խնդրում էր չը զրկել իրան կռւի համար անհրաժեշտ ոյժերից: Մարսելինան արդելեց Փիլիպպոսին խօսել ապագայի և ներկայի մասին, և նա ամբողջապէս դիմեց անցեալին, յիշելով իրանց ծանօթութիւնից ամենաանչան դէպքեր: Զահիլ կինը յափշտակվեց այդ յիշողութիւններով և նրանք սկսեցին պատմել միմեանց այն յիշողութիւնները, որ դուրս էին բերել նրանք պարահանդէսներում, կօնցերտներում և թատրոններում առաջին անդամ պատահելիս:

Այդ խօսակցութիւնների մէջ Մարսելինան և Փիլիպպոսը բոլորովին անսպասելի կերպով նկատեցին, որ նրանք համարեա տուն են հասել:

—Վերջացան ցնորքները, հոգւոց հանելով արտասանեց Մարսելինան, կանգնելով ճանապարհի մէջ տեղը.—ժամանակ է վերադառնալ մեզ դէպի իրական կեանքը: Հաւատացէք, որ ես երբէք չեմ մոռանայ այսօրվայ երեկոն, և յոյս ունեմ, որ դուք լաւ յիշողութիւն կը պահպանէք այդ զրօսանքի մասին: Ցեսնում էք, թէ որպէս ես անկեղծ եմ ձեզ հետ: Ցաւում եմ, որ մենք չուտով պէտք է բաժանվենք, և ով գիտէ, արդեօք մենք կրկին կը տեսնվենք: Նամակագրութիւն սկսել

կեղեցում ներկայ էր ոչ թէ միայն հայ կղերը, բայց և յոյն եպիսկոպոսը իր կղերով, նոյնպէս հայ-բողոքականների ղլխաւորը, և հայ ու օտարազգի միսիոնարները: Միայն կաթոլիկ հայերը բացակայ էին. նրանց մէջ դեռ ևս տիրապետում է ֆանատիկոսութեան ոգին»:

—

Մենք ստացանք Տրապիզոնից մի նամակ, որով մեզ հաղորդում են որ «Համազգային դպրոցի» նախկին տեսուչ պ. Մեղաւորեան, այժմ նշանակվեցաւ «Լուսաւորչական» դպրոցի տեսուչ:

—

Մեզ գրում են Ղազախի գաւառից, որ շնորհով նոր նշանակված պ. Աբիրէկեանց գաւառապետի, այժմ աւազակների խմբեր անյայտացել են այդ գաւառում: Այլ ևս ոչինչ չէ լսվում Թանդրիվերդի և Ալի-Բեօխվա յայտնի աւազակապետների մասին: Այժմ գողութիւնները անյայտացել են և ղազախեցիք ապահով դրութեան մէջ են: «Պ. գաւառապետի կարգադրութեամբ, աւելցնում է Թղթակիցը, ամեն մի գիւղի մէջ 10 տուն ընտրում են իրանցից մի մարդ և այս բոլոր մարդիկ պատասխանատու են ամեն գործերի համար, գողութիւնների, սպանութիւնների համար, որոնք կատարվում են գիւղում: Այս մարդիկ երդմամբ ընդունում են իրանց պաշտօնը, հաւատարիմ լինել: Սոքա տանուտէրին լաւ աջակիցներ են և եթէ խղճի մտօք ծառայեն, օրինաւոր տանուտէրի հետ, մեծ գործ կարող են կատարել: Նորերումս գաւառապետը հեռացրեց Սև-Քար գիւղից մի ընտանիք որպէս տարաղիր: Այս լուրը սարսափ դցեց ամենքի վրա և ամենքն էլ աշխատում են ուղղվել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Նորերումս հրատարակվեցաւ «Bismark. Zwölf jaare deutscher Politik» վերնագրով մի գիրք, որը գլխաւորապէս նուիրված է Գերմանիայի արտաքին քաղաքականութեանը: Այդ գրքի դրանից առաջ հրատարակված հատորը վերաբերում էր իշխան Բիսմարկի գործունէութեան զանազան կողմերին: Գրքի մէջ հրատարակված են հետաքրքիր առաջարկութիւններ, որ Բիսմարկ 1880 թուականին, աւստրօ-գերմանական դաշնակցութիւնից յետոյ արել է ֆրանսիական դեսպան Սէն-Վալիէին: Բիսմարկ ասել է. «երկու դարերից աւելի է, որ միջին Եւրոպայի պետութիւնները գաղտնի կամ բացարձակ թշնամիներ են: Պետական բոլոր մարդիկ աշխատել են իրանց դրացիի համար դժուարութիւններ ստեղծել կամ շրջապատել նրան դաշնակցութիւններով: Յայտնի ժամանակներում մի կտոր հողի համար նրանք արիւնահեղ պատերազմներ են ունեցել: Ֆրանսիայի, Աւստրիայի և Գերմանիայի մէջ եղած բոլոր պատերազմները յաղթողին օգուտ չեն տուել: Քանի որ այդ պետութիւնները պատերազմելիս են եղել միմեանց դէմ, Անգլիան և Ռուսաստանը կարողացել են ստեղծել իրանց հսկայական զօրութիւնը: Կորցնելով աւելի քիչ միջոցներ, քան թէ կորցրել են Ֆրանսիան, Աւստրիան և Գերմանիան փոխադարձ պատերազմի մէջ մի կտոր հողի համար, Ռուսաստանը և Անգլիան հասան տիեզերական տիրապետութեանը և այնտեղ հասցրին, որ Ֆրանսիան, Գերմանիան և Աւստրիան, ներկայացնելով աշխարհի կրթութեան, կուլտուրայի և ոյժի ամենամեծ գումարը, զրկված են միջոցներից զարգացնել իրանց զօրութիւնը: Այդպիսի համաշխարհային նշանակութեան առաջ, որ ունի միջին Եւրոպայի պետութիւնների դաշնակցութիւնը, Էլզաս-Լոտարինգիայի վերաբերեալ վէճը շատ անչնչան է: Այնուամենայնիւ Գերմանիան կաշխատէ միջոցներ գտնել փոքրացնելու համար իր անչնչան ւարը և Ֆրանսիայի վէրքը դարմանելու համար»: Ֆրանսիան պատասխանեց, որ նա դեռ պէտք է հաւաքէ իր ոյժերը արտաքին քաղաքականութեան մէջ դեր խաղալու համար: Գուցէ Բերլինի մէջ այդ առաջարկութեանը աւելի դրական պատասխան համարեցին Գամբետտայի Շերբուրգի մէջ արտասանած ճառը, որ Գերմանիայի մէջ վատ տպաւորութիւն գործեց:

—«Bismark Zwölf Jaare deutscher Politik» գրքի հեղինակը շարունակում է իշխան Բիսմարկի խօսակցութիւնը ֆրանսիական դեսպանի հետ. «Գիբրալտար և Մալտա Սուէզի ջրանցքի շնորհիւ մեծ նշանակութիւն ստացան, իսկ Կայիրէն լրացրեց անգլիական ծովային կայարանների թիւը Միջերկրական ծովի վրա: Գերմանիայի և Ֆրանսիայի պատերազմների շնորհիւ, ինչպէս Անգլիան, նոյնպէս և Ֆրանսիան տիեզերական պետութիւններ դարձան: Հռենոսի կողմից սպառնացող վտանգի վրա անդադար ուշադրութիւն դարձնելով, գերմանական պետութիւնները ստիպված էին ձեռք բերել Ռուսաստանի պաշտպանութիւնը և դրա փոխարէն նպաստել նրան իր նպատակներին հասնելու համար: Նրանք ստիպված էին տեսնել լեհական պետութեան անկումն, այդ պետութեան բաժանման ժամանակ անբնական դաշնակցութիւն կապել Ռուսաստանի հետ և միջոց տալ նրան Եւրոպայի մէջ ահագին երկիր ձեռք բերել: 1863 թուականին, լեհական ապստամբութեան ժամանակ, Պրուսիան Ռուսաստանի հետ մի դաշնագիր կապեց, որ մեծ ծառայութիւններ մատոյց Ռուսաստանի: Այդ քաղաքականութեան պատճառը երկիւղն էր Ֆրանսիայի կողմից: Աւստրիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները նոյնն են: Աւստրիան, որ մի չարք արիւնահեղ պատերազմներով մահուան հարուած տուեց Թիւրքիայի արշաւանքներին, ստիպված էր նայել, թէ Ռուսաստանը ինչպէս էր ձեռք բերում Թիւրքաց ժառանգութիւնը: Այն յամառութիւնը, որով Ռուսաստանը ձգտում է դէպի Միջերկրական ծովը, սպառնում է ոչ թէ միայն Աւստրիային, այլ և Ֆրանսիայի ազդեցութեանը և իրաւացի շահերին Արևելքում: Ներկայումս, շարունակում է Բիսմարկ, վտանգը երկու կողմից է սպառնում: Ֆրանսիացիները և գերմանացիները փոխադարձ ատելութեամբ պատրաստվում են նոր պատերազմի համար: Ֆրանսիացիները նոր դաշնակիցներ են փնտռում, ուշադրութիւն չը դարձնելով բարձր շահերի վրա: Ֆրանս-գերմանական այդ պատերազմն էլ դժբաղդապէս վերջինը չի լինի, բայց նա կը կատարվի Թիւրքիայի անկման ժամանակ, որը մի բաց կամուրջ է Եւրոպայից դէպի Ասիա: Եթէ Անգլիան և Ռուսաստանը կարողանան բաժանել Թիւրքիան, Ֆրանս-գերմանական պատերազմը մի տխուր երևոյթ կը լինի: Երբէք միջին եւրոպական պետութիւնների դաշնակցութիւնը այնքան անհրաժեշտ չէ եղել, ինչպէս այժմ: (Новости):

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իր հոգեկան և ֆիզիկական յատկութիւնների անյաղթելի ոյժը խոստովանող ամենին յարմար դէպքը ներկայանում օգտվելու դրանցից: «Neue Fr. Pres.» լրագրում տպված է հետևեալ յայտարարութիւնը. 14—20 տարեկան երկու կոմսուհիների (քոյրերի) համար, որոնցից իւրաքանչիւրը ութ միլիոն մարկ կարողութիւն ունի, փեսայացուներ են որոնում: Հասցէն գրել ի տառով, 3,343, Ռուդոլֆ Մոսէյի յայտարարութիւնների բիւրոն, Միւնխէնում, հասցնելու ըստ պատկանելոյն: Անպայման պահանջվում է (և փոխադարձապէս ապահովվում է) կատարեալ գաղտնապահութիւն:

***

Կինը մարդու փոխանակ:—Մի կին գնում է դեղատուն և դեղ է խնդրում ատամի ցաւի դէմ. դեղագործը հրամայում նրան բերանը բանալ և, գործիքով թեթև կերպով շարժելով ատամները, զգուշութեամբ հանում է մի ատամը, որը նրան կասկածելի էր թվում, մի և նոյն ժամանակ հարցնում է, թէ ցաւն անցաւ թէ չէ: Այն ժամանակ կինը յայտնում է, թէ իր ատամը չէ ցաւում, այլ իր ամուսնու ատամը և անիծելով իր ատամի յափշտակողին, դեղատնից հեռանում է դեղ չը վերցնելով իր մարդու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի: Հրատարակված է Անդրկասպեան շրջանի կառավարչի Ասխաբատից յունվարի 31-ին թագաւոր Կայսրին ուղարկված հետևեալ հեռագիրը. „Բաղդ ունեմ ամենայն խոնարհութեամբ յայտնել Ձեր Կայսերական Մեծութեանը, որ այսօր Ասխաբադի մէջ մերվեցի Թիւրքմէնների 4 ցեղերի խաները և 24 հաւատարմատարները, իւրաքանչիւրը 2,000 վրաններից ընտրված, ընդունեցին Ձեր Մեծութեան անսպայման հպատակութիւնը, պնդելով այդ հանդիսաւոր երդումով իրանց և Մերվի ամբողջ ժողովուրդի կողմից: Խաների և հաւատարմատարների յայտնութեան համեմատ Մերվի Թիւրքմէնները ընդունեցին այդ վճիռը, համոզվելով, որ իրանք անկարող են կառավարվել և որ Ձեր Մեծութեան հզօր կառավարութիւնը կարող է Մերվի մէջ կարգապահութիւն և բարօրութիւն մտցնել: Պետական խորհուրդի և կարծիքի համեմատ այսուհետև կրպակների մէջ բաց ամանով օղի ծախելու վկայականների համար վերցվում է 1-ին կարգի տեղերում 200 ր., երկրորդ կարգի տեղերում և երրորդ կարգի քաղաքներում 100 ր.: Եթէ անհրաժեշտ լինի, ֆինանսների մինիստրը կարող է թոյլատալ յիշեալ առևտուրը գիւղական կրպակներին երրորդ կարգի քաղաքների ձևով: 1884 թուականի համար արդէն վկայականներ վերցրած անձանց վերադարձվում է աւելորդը: Ներքին գործերի մինիստրութեան մէջ ծառայող Նորին Մեծութեան սվիտայի գեներալ-մայոր Յէյմէրն նշանակված է Աստրախանի նահանգապետ և Աստրախանի կօզակ զօրքերի ատաման: Յունվարի 31-ին գիւղական կալուածական բանկի Բէսգանի, Տամբովի, Պէնզայի և Կուրսկի բաժինները ընկեցին գործողութիւններ:

ԱԹԷՆՔ, 2 փետրվարի: Թիւրքաց դեսպանութիւնը հերքում է Կրիտ կղզու վրա ծագած ապստամբութեան լուրը:

ԼՕՆԴՕՆ, 2 փետրվարի: Գլադստոն հաղորդեց համայնքների ժողովին, թէ Գօրդօն-փաշա հեռագիր է ուղարկել, որ հաւատացնում է, թէ Բէրբերին և Խարտումին ոչինչ վտանգ չէ սպառնում: Երէկ Գօրդօն ուղևորվեցաւ Խարտում ազդեցութիւն ունեցող աւագների ուղեկցութեամբ:

ՓԱՐԻԶ, 12 փետրվարի: „Patrie“ լրագիրը հաղորդում է, որ Անամի մէջ քրիստոնեաներին կոտորում են: Բարձրաստիճան մանդարինների հաւաքած չարագործների խումբերը ջարդում են քրիստոնեաներին, աւերում են նրանց գիւղերը աղաղակելով. „մահ քրիստոնեաներին, մահ ֆրանսիացիներին:“

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ձեզ հետ ես ոչ մի պայմանով չեմ վստահանայ. ես նամակներից սաստիկ վախենում եմ... Խոստացէք լինձ, Փիլիպպոս, որ դուք երբէք, ոչ մի հանգամանքում, չէք թոյլ տայ ձեզ կրկնել այսօրվայ խօսակցութիւնը... Ես... ես բաժանում եմ ձեր զգացմունքը, բայց, յանուն պարտաւորութեան, ես պարտաւոր եմ մոռանալ այդ... և ասեցէք, Փիլիպպոս, միթէ չէ՞ կարելի սիրել միմեանց լուռ, չը խօսելով սեփական զգացմունքների մասին:

Փոխանակ որ և է պատասխանի, Փիլիպպոսը բացեց իր գիրկը և Մարսելինան ընկաւ երիտասարդ մարդու կրծքի վրա... Այդ անսպասելի հանդամանքը համարեա մէկ ամբողջ ժամով ուշացրեց նրանց տուն վերադառնալը, որովհետև չէր կարելի, բուռն սիրոյ այդպիսի արտայայտութիւնից յետոյ բաժանվել, սեղմելով միմեանց ձեռքերը:

Բացի դրանից, անհրաժեշտ էր լրջութեամբ կըշռադատել գործերի ներկայ դրութիւնը: Եւ նրանք բաժանվեցան ասելով «ուրեմն, մինչև էգուց... եկէք աւելի վաղ»:

IV

Մարսելինան ընակվում էր Մարնի գետափի վրա գտնվող տան երկրորդ յարկում,—և այդ բընակարանը միշտ հաճելի էր նրան, բայց այսօր, բաժանվելով Փիլիպպոսից և հետ դնելով դուռը, նա իրան կտրված զգաց ամբողջ կենդանի աշխարհից: Նրան թվում էր, որ իրան փակեցին ընտանեկան դամբարանում, ուր դրված են նախահայրերի դագաղները, այն ինչ նրա սրտում հնչում էր զարթնող սիրոյ հրաշալի երգը և նրա բոլոր էութիւնը քաղցրիկ կերպով թալկանում էր այրող երջանկութիւնից, տառապող-ուրախութեան զգացմունքից, թէ նա սիրված է: Եւ, կարծես, ցանկանալով համոզվել, որ իր և արտաքին աշխարհի մէջ կայ մի կենդանի կապ, Մարսելինան մօտեցաւ պատուհանին և բացեց նրան: Փիլիպպոսը, կարծես նախազգալով նրա շարժմունքը, կանգնած էր պատուհանի տակ, և Մարսելինան նոցից ընկաւ երիտասարդի կրծքի վրա, պատասխանելով նրա կրքոտ համբոյրներին:

—Շնորհակալ եմ քեզանից, շնորհակալ, շշնջում էր Փիլիպպոսը,—ես տխուր էի... դու մխիթարեցիր լինձ, հանգստացրիր... Մնաս բարով, իմ ամբողջ կեանքը պատկանում է քեզ, և միայն քեզ:

Նա հարբածի նման տատանվելով հեռացաւ: Մարսելինան, մտնելով իր սենեակները, երկիւղով մտածում էր այն բանի վրա, թէ ինչ պէտք է պատասխանի իր ամուսնու հարցերին... Ծառան նիրհում էր նախասենեակում: Նա հարցրեց նրան, թէ ո՞րտեղ է Վալէնտինը:

—Պարոնը խնդրում էր ձեզանից չը մտնել նրա մօտ: Նա փակվեցաւ իր առանձնասենեակում և ամբողջ գիշերը կաշխատի: Մարսելինան ուրախութեամբ հոգւոց հանեց:

—Լաւ, ասեց նա,—դուք կարող էք գնալ և քնել, լինձ ոչինչ չէ հարկաւոր...

Նա մտաւ իր սենեակը և, առանց հանվելու, ընկաւ դիվանի վրա: Առաւօտեան միայն, երբ արեգակը արդէն բարձր էր կանգնած, Մարսելինան քնեց անհանգիստ քնով:

Այդ անմոռաց խօսակցութեան օրին հետևող երեք շաբաթների ընթացքում, Մարսելինան և Փիլիպպոսը դրախտի մէջ էին զգում իրանց: Խաղաղութիւնը, համաձայնութիւնը և սէրը ոչինչով չէին խանգարվում: Իւրաքանչիւրը սիրում էր բոլորին, և բոլորը—իւրաքանչիւրին: Մարսելինան քնքշութեամբ հոգս էր քաշում իր ամուսնու մասին և մինչև անդամ—ով անձնազոհութիւն,—ամեն օր հեռագրերվում էր ինֆուզորիայի կեանքով և մօտենում էր ակվարիումին: Փիլիպպոսը առանձին ուշադրութեամբ ականջ էր դնում Վալէնտինի պատմութիւններին նրա զարմանալի գիւտի մասին և մեծ ապագայ էր մարգարէանում նրան: Ծառաների ռոմիկը աւելացրին, նրանց կողմից առանց որ և է խնդիրքի, փոքրիկ ընծաներ էին անում միմեանց և ամենաչնչին պատրուակից օգուտ էին քաղում սովորական օրը ուրախ տօնի փոխարկելու համար:

Բոլորը, ինչ որ սիրահարված կինը կարող է թոյլ տալ իր սիրեկանին, յանցաւոր կին չը դառնալով,—Փիլիպպոսը ստանում էր, և լինում էին ժամեր (աւելի հաւանական է կիսաժամեր), երբ Մարսելինան դառն կերպով զղջում էր և յանդիմանում էր իրան իր թեթևամտութեան համար:

Բայց Վալէնտինը ոչինչ չէր նկատում, խորասուզված լինելով իր գիտական պարապմունքների մէջ. նա ամենևին ուշադրութիւն չէր դարձնում կնոջ վրա, ուրախանալով, որ իրան չեն արգելում, չեն անջատում իր հետազօտութիւններից: Փիլիպպոսը այնքան ազնիւ էր, որ երբէք չէր վստահանում դատապարտել իր բարեկամի վարմունքը, և Մարսելինան ևս չէր թոյլ տայ նրան չարախօսել Վալէնտինի մասին: Բայց Փիլիպպոսը շատ անգամ յայտնում էր իր ցաւակցութիւնները Մարսելինայի վիճակի մասին, ասելով, որ Վալէնտինը չը գիտէ գնահատել իրան վիճակված գանձերը...և ջահել կինը ականջ էր դնում այդպիսի խօսակցութիւններին, չընդմիջելով նրանց:

Առանձին մնալով, սիրահարները ոչ միայն չէին հայհոյում Վալէնտինին, բայց միաձայն գովում էին նրան, գտնելով նրա մէջ տաղանդաւոր հաղուագիւտ յատկութիւններ: Շատ յաճախ, ջերմ համբոյրների միջոցին, Մարսելինան և Փիլիպպոսը արտայայտում էին իրանց սէրը և յարգանքը դէպի այդ «հաղուագիւտ բարեկամը», «մեծ գիտնականը», «զօրեղ և հանճարաւոր մարդը», ասելով, որ նա միայն ամբողջ Ֆրանսիայում արժանի է ակադէմիայում բաղկանալ ստանալուն, և որ այդ անարդարութիւն է, եթէ այնտեղ պակվում են այնպիսի մարդկանց աշխատանքները, որոնց մասին իրանք երբէք ոչինչ չեն լսել:

Եւ այսպէս, մեր բախտաւոր երրորդութեան կեանքը հոսում էր, չը խանգարվելով որ և է կնճիռներով: Այն ինչ մօտենում էին ճակատագրական անցքերը: Հասաւ չորեքշաբթին, մարտի 24-ը:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԷՅ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ այս տարի չափազանց **ԳՈՅՆԱԻՈՐ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ**։ Այդ թէյից ստացված է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ 50,000 **ՖՈՒՆՏ** և ծախվում է 25°/₀ ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 20 կ., շատ լաւ ՕՕՆՑԱ թէյ 1 ր. 40 կ., գերազանց ՄՕՆԻՆԳ թէյ 1 ր. 60 կ. (այս թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր. 50 կ.), ԿԱՍԱՌԻ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ՖՈՒ-ՉԷ-ՖՈՒ թէյ 2 ր. փունտը քարչը առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում է 500 ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր.։ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ մազերի համար։ երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Կովկասի համար, շօկօլադ ՖՐԱՅ, շէֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, հրացաններ ԴԱՈՒ, րէվօլվերներ ՎԷԲԼԻ, ԲԱՐՆԷԲԻԻ ժամեր, ՇՎԱՐՑԻ ալբօմներ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԸ գտնվում է Թիֆլիսի մէջ, Դվորցովի փողոցի վրա Արծրունու գալլէրէում №№ 156, 157, 158, 159, 160։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԵՐԵԽԱՆԵՐԻ և տղամարդկանց մահճակալներ 25°/₀ էժան քան թէ ուրիշ տեղ և 10°/₀ էլ զիջումն։

4—100

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾ.

„ԵՂԲ. ՍԱԼԻ-ՕՂԼԻ"

Պատիւ ունի յայտնել ծխող յարգելի հասարակութեան, որ արդէն արտադրել է տաճկական և տեղական ընտիր ծխախոտներից սիգարէտկաներ և պախիտասներ, որոնք վաճառվում են թէ Թիֆլիսի թէ այլ քաղաքների նշանաւոր ծխախոտ ծախս անողների մօտ։

Առաւելապէս առաջադրվում են սիգարէտկաները «Алитура—ачведо» և պախիտոսները «Фіалка» կոչվածները։

Փոստով պահանջողների ճանապարհի ծախքը գործարանը իր վրա է ընդունում։

3—3 (2)

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ որ հիմնված է կենդանիների հովանաւորութեան ընկերութենից գտնվում է Սաղի վրա, Գվրիտի-շվիլիի տանը։ Հիւանդները ընդունվում են ամեն օր առաւօտեան 10—12 ժամը։

Խորհուրդի և դեղատոմսի վճարը 20 կ., իսկ դեղերը այն գնով, որով ձեռք է բերում հիւանդանոցը։ Աղքատները այդ բոլորը ձրի են ստանում։ Առողջ կենդանուն քննելու համար 1 րուբլ է վերցվում։ Հիւանդ անասուններին ընդունում են հետևեալ ատենաբոյժները. Շէյն-Ֆօգէլ երկուշաբթի, Ժիտօվսկի երեքշաբթի, Ցիլիմծնօվ չորեքշաբթի, Բալօտով հինգշաբթի՝ Ալտինոտն ուրբաթ, Մէշչէրսկի շաբաթ և Վամիլօվսկի կիրակի։ Վերջին անասնաբոյժը ապրում է հիւանդանոցի մէջ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ

ՎԷՊԵՐ

ՉԱԽԵՐ-ՄԱԶՕԽԻ

թարգմանեց

ՐԱՖՖԻ

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼ 20 ԿՈՊ.

Թիֆլիսում վաճառվում է

«Մշակի» խմբագրատանը—«Կենտրոնական գրավաճառանոցում»— «Կովկասեան գրավաճառանոցում»—Գ. Շահվերդեանի պավիլիօնում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել թարգմանչին այս հասցէով.

Въ ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ".

РАФФИ.

8—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

(առանձին փոփոխութեամբ)

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

„ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ"

ԵՒ

„ՀՐԴԵՀ ՆԱՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ"

աշխատասիրութիւնը

ԱՐԺԷՔ 50 ԿՈՊԷԿ.

Կարելի է ձեռք բերել Թիֆլիսի մէջ կենտրօնական գրավաճառանոցում, Աղէքսանդր Մովսիսեանի մօտ, և „Աստուածատրեանց և ընկ" առևտրական տների մէջ Կատօլիչեսկայի փողոցում, Զուբալօվի տանը։

Հրատարակիչ—Աբէլ Ապրէսեանց



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում . .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի .	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Րիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6— 8	6—11 երեկ.	Գորի . . .	10—56	11— „
Միխայլօվօ .	6—23	6—33	Միխայլօվօ .	12—26	12—46
Գորի . . .	7—53	8— 2	Սուրամ . .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Րիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի .	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում . .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ . .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվօ .	1—50	2— 5	Գորի . . .	6—30 երեկ.	6—41
Գորի . . .	4— 6	4—30	Միխայլօվօ .	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ . .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . .	—	8—45 առ.	Սամտրեդի .	—	7—30 երեկ.
Սամտրեդի .	11—39 առ.	—	Փօթի . . .	10—24 երեկ.	—

Արդէն մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի **ԴՐ. Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ** դասախօսութիւնների երկրորդ տետրակը՝ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ։ Բաժանորդներին իր ժամանակ կուղարկուի։ Ձը ստորագրողներին յիշեցնում ենք, որ բոլոր եօթ դասախօսութիւնների համար կանխիկ վճարն է 1 րուբլի 50 կոպէկ. իսկ Թիֆլիզից դուրս 1 ր. 65 կ։ Դիմել Թիֆլիզի գրավաճառանոցները և կամ հեղինակին հասցէով՝ Тифлисъ, Лабораторная улица, домъ Цуринова, № 5.—



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Զ Ի Ն Գ Ե Ր

Ն Ի Ւ - Ի Օ Ր Կ Ի Մ Է Ջ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ։

Ծախում է ամենալաւ համարված կարեմեքենաներ նպատող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթև ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու։ Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՕՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ։

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Զինգերի կարեմեքենաների համար։

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին գմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Զինգերի իսկական կարեմեքենաների տեղ։ Զգուշացնում եմ ձեզ, որ Զինգերի իսկական իւրաքանչիւր կարեմեքենան The Singer Manufacturing C-⁰ ֆիրմայից ունի գործարանի դրօշմներ մեքենայի կօթի և մամուլի վրա. The Singer Manufacturing C-⁰

Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

ԲԱԹՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի։
ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Շնէյդերի։
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Միրզա-Աւագովի։
Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Զինգերի ամենաօգտակար և իսկական կարեմեքենան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ռ. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու։ Հնացած մեքենաները խանութը փոխում է։ 56—50 (1)

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Января 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. чэс., Лорисъ-Меликовская ул., д. каз.